Արձանագրություն N 6

ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով էլեկտրոնային գնումների e-AUCTION համակարգի միջոցով իրականացվող էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արամ Միրիջանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դավիթ Մարգարյան, Արտակ Մադաթյան, Անդրե Ամիրխանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Էդվարդ Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Արամ Միրիջանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Մասնակցի՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքի պահանջներին չբավարարելու մասին,
3. Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին,
4. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2. Մասնակցի՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքի պահանջներին չբավարարելու մասին
(Արամ Միրիջանյան)

Ընդունել ի գիտություն, որ «Էսզեթ Ֆարմա ՍՊ Ընկերությունը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից տրամադրվել է տեղեկատվություն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն, համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները: ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալի, ի թիվս այլնի նաև Երևանի քաղաքապետարանին ուղարկված թիվ № 03/26-1/17361-2024 գրության համաձայն՝ եթե 06/05/2023թ. սկսած «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները մասնակցել են գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվի միջոցներ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Նշված փաստաթղթերը Երևան բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետարանի N- Շ/586-2024 գրությանը կից

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Աննարկա», «Էսզեթ ֆարմա» և «Էսզեթ ֆարմ» ՍՊ ընկերությունները փոխկապակցված ընկերություններ են, ուստի համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 121-րդ կետի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչված ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

ProTender©

3. <u>Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին</u>
(Արամ Միրիջանյան)

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 121-րդ կետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Երևանի քաղաքապետարանի N-Շ/586-2024 գրությունը և կից փաստաթղթերը անհրաժեշտ է որոշում կայացնել ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:

<u>4. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին</u>
(Արամ Միրիջանյան)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

<u>Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:</u>

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արամ Միրիջանյան

Անդամներ՝ Դավիթ Մարգարյան

Արտակ Մադաթյան

Անդրե Ամիրխանյան

Քարտուղար՝ Էդվարդ Գրիգորյան

ProTender©